բածութիւնները ոգկոյզներով լցուած, իսկ գրան շրջանակը երկրաչափական պէսպիսութիւններով ճիպոտազարդ (պատկ. 143). կամարի անկիւններից դէմ առ դէմ երկու սիրամարգներ են կանգնած։ Շրջանակուած և քառանկիւնի լուսամուտի գլխին առիւծի յարձակումն է ցուլի վերայ (պատկ. 144). բոլորն էլ սելջուկեան արուեստի մէջ սիրուած մոտիւներ, որոնց զուգահեռ երևոյթը յատուկ է նաև ԺԲ. – ԺԴ. դարի հայ արուեստին (*)։

Ժամատան շինութեան համար չունինք հաստատ թուական, բայց չպէտք է տաճարից շատ ուշ լինի, ԺԴ. դարի առաջին կիսում սովորութիւն էր, գրեթէ առանց բացառութեան, տաճարներին կից՝ արևմտեան կողմից գաւիթների կամ ժամատների շինութիւնը. այդ ժամանակից չունինք որ և է աչքի ընկնող շէնք, որ իւր ժամատունը չունենար, և միշտ տաճարից անմիջապէս կամ քիչ յետոյ շինուած։ Այսպէս ըստ Գանձակեցու (*) եւ ըստ արձանագրութիւնների շինուել է նախ՝ Գոշ Մխիթարի վանքը և ապա գաւիթը։ Տեղերու վանքը (Արագածոտն գաւառում) պէտք է



Պատկեր 145.

(*) Տաճարի յատակագիծը տես Ouvarova-ի Materiali bo Archäologie T. XIII. եր. 3, իսկ զարդարանքներն ու բարելիեֆը Tabl. III։ Հայ և Սելջուկեան արուեստների յարաբերութեան մասին, Խաղբակեանք Գլ. Ի.։

(*) Գանձ. 155, 200, 204։